



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 7 ՄԱՐՏ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ ՚ս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

Մարտոս 62

ԱՍՏՈՒԱԾ Է ՓՐԿԻԶԸ ԵՒ ԱՊԱԻԷՆԸ

Միայն Աստուծով հոգիս հանգիստ կը գտնէ.
անկէ կու գայ փրկութիւնս:
Միայն ան է ապաստանս եւ փրկութիւնս,
ան է իմ ապաւէնս բնաւ պիտի չսասանիմ:
Աստուծմէ կախում ունի փրկութիւնս եւ փառքս.
ան է ամուր միջնաբերդս.
ես Աստուծոյ կ'ապաւինիմ:
Անոր վստահեցէ՛ք միշտ, ով ժողովուրդ,
անոր դիմաց պարպեցէ՛ք ձեր սիրտը.
Աստուած է մեր ապաւէնը:
Բոլոր մարդիկ շունչ մըն են պարգապէս.
ոամիկ կամ ազնուական՝ խաբկանք են, ուրիշ ոչինչ.
հարստահարութեան մի՛ ապաւինիք,
յափշտակուած բաներով մի՛ հպարտանաք:
նոյնիսկ եթէ ձեր հարստութիւնը բազմապատիկ ըլլայ,
ձեր սիրտը անոր չըլլայ որ կապէք:
Աստուած ինք յայտարարեց, եւ քանիցս ես լսեցի՝
թէ գորութիւնը Աստուծոյ կը պատկանի:
Այո, ո՛վ Տէր, ողորմութիւնն ալ բուկդ է,
որովհետեւ իւրաքանչիւրին կը հատուցանես իր գործերուն համաձայն:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէլոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՊՈԹՔ

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒԲԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 7:1-40)



ՄՆԱՑԷՔ ԱՅՆՊԷՄ ԻՆՉՊԷՍ ԱՍՏՈՒԲԾ ՁԵՉ ԿԱՆՉԵՑ (7:17-24)

Ամուսնացած զոյգերուն, ամուրիներուն եւ այրիներուն իր թելադրութիւնն ու յորդորը փոխանցելէ յետոյ, այնպէս կը թուի, թէ այս հարուածը կապ չունի, բայց ընդհակառակը, Պօղոս Առաքեալ այս հարուածով կու գայ բացատրելու, թէ «**Իւրաքանչիւրը թող ապրի Աստուծմէ իրեն փրուած շնորհքին համաձայն, ինչպէս որ էր՝ երբ Աստուած զինք կանչեց**» (17 հմբ): Առաւել եւս, այս հարուածը նաեւ կը դառնայ կապող օղակը նախորդ հարցը յաջորդ հարցին կապելու:

Այս հարուածով Պօղոս Առաքեալ կու գայ բացատրելու եւ ներկայացնելու, թէ քրիստոնէութիւնը կամ քրիստոնէական հաւատքը ընդունիլ չի նշանակեր կարգավիճակներու փոփոխութիւն: Այո՛, քրիստոնէութեան դարձի գալը անհապի կեանքին մէջ հիմնական փոփոխութիւն կը բերէ, սակայն՝ բարոյական ու հոգեւոր, ոչ անպայման ընկերային կեանքին մէջ: Յաճախ այնպէս մը կը կարծենք որ քրիստոնէական հաւատքը ընդունելով յանկարծ մեր ընկերային կարգավիճակը պէտք է փոխուի: Բայց պայման չէ: Որովհետեւ քրիստոնէութեան նպատակը քաղաքական ու ընկերային դրուածքը փոխել չէ, այնքան որքան մարդուս ներաշխարհը փոխել, անոր մրաձեւակերպը, աշխարհայեացքը, ահա այն արեւն նաեւ փեղի կ'ունենայ, ինչու չէ, փոփոխութիւն ընկերային կարգը: Որովհետեւ ինչ վիճակի մէջ ալ ըլլանք, ամուսնացած կամ ոչ, որպէս շնորհներ փրուած, կրնանք զԱստուած փառաւորել:

Այս հարցը, սակայն, որպէս կարգավիճակներու փոփոխութիւն, կրնայ փանիլ նաեւ ուրիշ կարգավիճակներու, ինչ որ Առաքեալը նաեւ կ'անդրադառնայ անոնց, ըսելով. «**Հրեայ մըն է կանչուածը. թող չձածկէ իր թլփափուած ըլլալը: Հեթանոսութենէ եկա՞ծ մըն է. թող չթլփափուի**» (18 հմբ): Եթէ անցեալէն եկած թլփափութեան ենթարկուած ես, մի՛ փորձեր այնպէս ընել, որ ձածկես այդ երեւոյթը: Եւ կամ եթէ չես թլփափուած, որպէս հեթանոս, մի՛ փորձեր թլփափուիլ, ինչ որ կարգ մը մոլար ուսուցումներ կը փորձէին պարպադրել այս երեւոյթը հեթանոսութենէ դարձի եկողներուն: Այս պարագային համար Գործք Առաքելոց 15 գլխ յարակօրէն ցոյց կու տար թէ հեթանոսութենէ դարձի եկողները երբեք ալ պարպադիր չէ հետեւելու Մովսիսական Օրէնքին, այս պարագային՝ թլփափուելու:

«**Որովհետեւ կարեւորը մարդուս թլփափուած կամ անթլփափ ըլլալը չէ. կարեւորը՝ Աստուծոյ պատուիրանը պահելն է**» (19 հմբ): Սա չի նշանակեր, որ անցեալի փրուած թլփափութեան պատուէրը անիմաստ էր: Ընդհակառակը, անցեալին փրուածը ուրիշ բան չէր եթէ ոչ պարպասութիւն, դաստիարակութեան միջոց, նախաճաշակ գալիք այն ճշմարտութեան, որով Քրիստոսով պիտի իրականանար: Անոր համար ալ Պօղոս Առաքեալ Գաղաթափներուն ուղղուած նամակին մէջ պիտի ըսէ. «**Կարեւորը մարդուս թլփափուած կամ անթլփափ ըլլալը չէ, այլ Քրիստոսով նոր արարած**» (5:6): Իսկ այս բաժնին մէջ կ'ըսէ. «**Կարեւորը Աստուծոյ պատուիրանը պահելն է**»: Այո, Աստուծոյ պատուիրանն էր թլփափութիւնը, բայց այս պարագային, Աստուծոյ պատուիրանը անցեալին փրուած որպէս նախաճաշակ հոգիի թլփափութիւնն էր, այսինքն՝ մեղքէ հեռու մնալը: Եւ ոչ թէ պարզապէս մարմնաւոր թլփափութեան մասին: Որովհետեւ եթէ երբեք պայման էր թլփափութիւնը Աստուծոյ ժողովուրդին մաս կազմելու: Ապա հոգեւոր թլփափութիւնն է ամենակարեւորը Աստուծոյ ժողովուրդին մաս կազմելու, այսինքն՝ մեղքէն հեռու ապրողն է, եւ մեղքը իրմէ դուրս դնողն է, որ կրնայ Աստուծոյ ժողովուրդին մաս կազմել: Միւս կողմէ, Աստուծոյ պատուիրանը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ սիրոյ պատուիրանը. «**Սիրէ քու Տէր Աստուածդ, քու բոլոր սրտովդ, մտքովդ, հոգիովդ ու զօրութեամբդ**: Եւ սիրէ քու ընկերդ քու անձիդ պէս»:

«**Իւրաքանչիւրը ինչ վիճակի մէջ էր երբ Աստուած զինք կանչեց՝ թող նոյն վիճակին մէջ մնայ**» (20 հմբ): Այս հարուածը որպէս կրկնութիւն, բայց յաւելեալ բանն այն է, որ ցոյց կու տայ թէ Աստուած Ինքն է կանչողը: Ինչպէս Քրիստոս պիտի ըսէ. «**Եթէ Հայրս ձեզ չկանչէ, դուք չէք կրնար ինձի գալ**» (Յովի 6:44):

«Սարտուկ էիր երբ կանչուեցար. հոգ մի՛ ըներ: Իսկ եթէ կարենաս ազապ ըլլալ՝ աւելի լաւ: Ռոտվիտերեւ այն մարդը որ սարտուկ վիճակի մէջ Տիրոջ պատկանելու կոչուեցաւ՝ Տիրոջմով ազապագրուած մըն է: Նոյնպէս ալ այն մարդը որ ազապ վիճակի մէջ կոչուեցաւ՝ Քրիստոսի ծառան է» (21-22 հմբ): Այնպէս ինչպէս հեթանոս ամուսին մը քրիստոնէայ կնոջ հետ կապին, որուն համար Առաքեալը կը թելադրէր, որ չբաժնուիլ, որովհետեւ այդ ձեւով զաւակները մաս կը կազմեն Աստուծոյ ընտանիքի, նոյնպէս ալ սարտուկի պարագային, մի գուցէ իր պարճառով տերը կամ անոր պարագաները դարձի գալու առիթը կ'ունենան: Իսկ եթէ պարահեցաւ, որ հեթանոս ամուսինը ուզէ բաժնուիլ, թող բաժնուի: Այնպէս ալ եթէ սարտուկին տերը ուզեց ազապ արձակել, ուրեմն առիթը օգտագործել:

Ահա Պողոս Առաքեալ յսրակ զանազանութիւն մը կը դնէ քրիստոնէական ազապութեան եւ ծառայութեան աշխարհի հասկցած ազապութեան եւ ստրկութեան միջեւ: Ճշմարիտ ազապութիւնը այն չէ անկախ կամ ինքնագլուխ ըլլալ, այլ մեղքի տիրապետութեան տակ չըլլալ: Ահա ճիշդ այդ ազապութեան համար Աստուած այդ փրկագինը վճառել տուաւ Քրիստոսով, որպէսզի մեղքին ծառան կամ սարտուկ չըլլալ, այլ Քրիստոսի: «**Աստուած փրկագինով ձեզ գնեց. մարդոց ծառայ մի՛ ըլլաք**» (23 հմբ):

Այս հարուածը կու գայ բացարեւելու քրիստոնէական ըմբռնումը հանդէպ գերութեան: Եթէ մարդկութիւնը ճանչնայ Աստուծոյ հայրութիւնը, ու մանաւանդ իրարու նկատմամբ եղբայրութեան սկզբունքը, ահա այն արեւն աստիճանաբար գերութիւնը պիտի ջնջուի:

«**Իւրաքանչիւրդ ինչ վիճակի մէջ որ էիք՝ երբ Աստուած ձեզ կանչեց՝ նոյն վիճակին մէջ մնացէք Աստուծոյ առջեւ**» (24 հմբ):

Յաճախ այնպէս կը կարծենք, որ եթէ երբեք կարգավիճակները փոխուեցան, ուրեմն մարդկութիւնը կը փոխուի: Ընդհակառակը, քրիստոնէութիւնը կը հաւաքայ, որ եթէ մարդոց մտայնութիւնը, մտածելակերպը փոխուի, ահա այն արեւն ընկերութիւնը կը փոխուի: Այնպէս ինչպէս պիտի ըսէ Առաքեալը. «*վերանորոգուեցէք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եղէք նոր մարդ՝ Աստուծոյ պատկերին համաձայն, եւ սարեցէք ճշմարիտ կեանքը՝ արդարութեամբ ու սրբութեամբ*» (Եփես 4:23-24):

Հետեւաբար, ճշմարիտ քրիստոնէան ինքզինք պէտք է ըմբռնէ այնպէս մը, որ ինչպիսի կարգավիճակի մէջ ալ ըլլայ, գայն նկատի ունենայ որպէս շնորհք Աստուծմէ տրուած, որովհետեւ արդէն Աստուած զինք կանչած է: